ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման ձևերը տարրական դասարանների դասագործընթացում»

ԱՌԱՐԿԱ Դասվար (Մայրենի, Մաթեմատիկա)

ՀԵՂԻՆԱԿ Կարինե Անդրանիկի Հարությունյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Հալիձորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ……..……..5

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ……6

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ……...13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……..…17

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……..…18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Անհնար է պատկերացնել արդի ուսուցումը, առանց տարբեր մեթոդների, հնարների ու միջոցների կիրառման, որոնց մեջ առանձնահատուկ տեղ են գրավում փոխներգործուն մեթոդները, որոնք նպաստում են ուսուցչի և աշակերտի փոխադարձ համագործակցությանը, որն ուղղված է ուսումնառության նախանշված արդյունքներին հասնելուն:

Համագործակցության ճանապարհով ձեռք բերված գիտելիքները ավելի կայուն են, ավելի կիրառելի:

Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը, ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատուկ ձև է, որն իր մեջ ներառում է հատուկ կանխատեսելի նպատակներ, որը թույլ է տալիս ստեղծել հարմարավետ կրթական միջավայր, որտեղ սովորողը միայն լսող չէ, այլ ակտիվ մասնակիցն է ողջ ուսուցման գործընթացի: Փոխներգործուն մեթոդները բարձրացնում են կրթության արդյունավետությունն ու որակը: Փոխներգործուն մեթոդի էությունը կայանում է նրանում, տվյալ մեթոդների միջոցով ստեղծվում են ուսուցման այնպիսի պայմաններ, որտեղ սովորողը յուրացնում է ոչ միայն իր ուսումնական նյութը, այլ նաև փոխգործակցում է իր համադասարանցիների հետ: Փոխներգործուն մեթոդների կիրառումը զարգացնում է սովորողի մտածողությունն, երևակայությունը, ինքնուրույնությունը, հիշողությունը, խոսքը, նպաստում միջառարկայական կապերի ամրապնդմանը:

Մեթոդների ընտրությունն ու կիրառությունն ինքնանպատակ չեն լինում, դրանց ընտությունը կախված է տվյալ դասի թեմայից, բովանդակությունից և այն:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել փոխներգործուն մեթոդների առանձնահատկությունները, բացահայտել դրանց կիրառման ազդեցությունն ու դաստիարակչական ներգործությունը տարրական դասարանների աշակերտների ուսուցման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել փոխներգործուն մեթոդների վերաբերյալ մասնագիտական գրականություն,
2. Բացահայտել փոխներգործուն մեթոդների ազդեցությունը տարրական դասարանների ուսուցման գործընթացում:
3. Համակարգել փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությանը նպաստող ուղիներ:

Հետազոտության մեթոդներն են.

1. Մասնագիտական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն
2. Զրույց, փորձարարական դասերի վարում
3. Դասալսումներ և այլն:

Հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունը պայմանավորված է նրանում վերլուծված ու համակարգված փոխներգործուն մեթոդների առկայությամբ, որոնք օգտակար կլինեն մանկավարժներին ու մանկավարժական բուհում սովորող ուսանողներին՝ դասեր պլանավորելու և կազմակերպելու համար:

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թե ինչպե՞ս երեխան կկատարի իր առջև դրված առաջադրանքը, արդյո՞ք տվյալ դասընթացը հետաքրիքիր կլինի նրա համար, կմտածի՞, կանի՞ վերլուծություններ ու դատողություններ: Այս ամենը կախված է նրանից, թե տվյալ դասընթացի ժամանակ ինչ միջոցներ, պայմաններ են ստեղծված աշակերտների համար:

Ներկայումս ուղղակի անհնար է պատկերացնել ուսուցման գործընթացը՝ առանց ուսուցիչ ու աշակերտ և աշակերտ ու կոլեկտիվ փոխհարաբերությունների ու ակտիվ համագործակցման:

Ուսուցման գործընթացը ավելի հետաքրքիր, դյուրին ու անմիջական կազմակերպելու համար ուսուցիչները կիրառում են բազմաթիվ մեթոդներ ու հնարներ: Սույն հետազոտական աշխատանքում մենք անդրադառնալու ենք փոխներգործուն մեթոդներին, որտեղ աշակերտը ողջ ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցն է:

Փոխներգործուն մեթոդները թույլ են տալիս դասապրոցեսի մեջ ներառել ողջ դասարանին, ստեղծվում է ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-աշակերտ փոխհամագործակցություն: Մեթոդի հիմքում երկխոսությունն է, որը թույլ է տալիս զարգացնել աշակերտների հաղորդակցման խնդիրները, միասնական մեկ խնդրի շուրջ համախբվելու կարողությունը, ամենակարևորը աշակերտների խոսքն ու քննադատական մտածողությունը: Որի նպատակն է ստեղծել բարենպաստ հոգեբանական միջավայր, ինչն էլ իր հերթին խթանում է անձի լիարժեք զարգացումը: Համադասարանցիների հետ երկխոսության մեջ մտնելով, սեփական մտքերը, պատկերացումներն ու հույզերը արտահայտելն արդեն իսկ բավականին մեծ աշխատանք է: Դիմացինի կարծիքը լսել, համադրելն ու հակադրելը բավականին դժվարին գործ է:

Եթե աշակերտը ունի թերարժեքության խնդիր, չի համարձակվում իր մտքերն արտահայտել, կարծիքը պնդել, տեսնելով որ ուսուցիչը արժևորում է իր խոսքը,

կարևորում մտքերը, ավելի է ոգևորվում և արդեն վստահ ու անկաշկաղ է մասնակցում դասապրոցեսին։

Փոխներգործուն մեթոդների նպատակն է.

1. Ճանաչել յուրաքանչյուր երեխայի, վեր հանել նրա էությունն ու բնույթը։
2. Սովորել և սովորեցնել
3. Կատարել թիմային աշխատանք, միասնական որոշում ընդունել, և պատասխանատվություն կրել
4. Ստեղծել դրական հարաբերություններ
5. Բարդ իրավիճակներում դրսևորել հավասարակշռված պահվածք
6. Լինել բարեկիրթ, հարգել դասընկերոջ իրավունքները

Ամենակարևորը նպատակն աշակերտի ամբողջական զարգացումն է, որն է բացահայտել աշակերտի ներքին ընդունակությունները, մտավոր կարողությունները։

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հատկապես տարրական դասարաններում շատ կարևոր է կիրառել ուսուցման փոխներգործուն մեթոդները, որովհետև դրանք թույլ են տալիս նյութը մատուցել մատչելի,, դասը դարձնել հետաքրքիր ու պատկերավոր, նպաստում են գիտելիքների խուրը ամրապնդմանը, հետաքրքրություն են առաջացնում ուսուցման հանդեպ, միաժամանակ ձևավորում են սոցիալական, տեղեկատվական գրագիտություն։

Տարրական դասարաններում ընթերցանության դասերի ժամանակ կարող ենք միջառարկայական կապերի ստեղծել բացատրական ընթերցանություն-կերպարվեստ, մայրենի–տեխնոլոգիա, մայրենի մաթեմատիկա, մայրենի-երգ, մայրենի-ես և շրջակա առարկաների միջև։

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերը կազմված են ինտեգրման սկզբունքով, որն է իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցում՝ընթերցանության նյութերի միջոցով:

Մեծն մանկավարժ, գրող՝ Ղազարոս Աղայանը, ասել է «Թեպետ ուղիղ է ասված, թե ուսուցումը պետք է տանենք հեշտից դեպի դժվարը, բայց ավելի ուղիղ կլինի ասել, թե ուսուցման համար ինչ–որ դժվար է , պետք է հեշտացնել:»[1]

Եվ, հիրավի, այսօր արդեն աղայանական միտքը իրականություն է դարձել:

Միջառարկայական կապերի ստեղծումը կարևոր դեր ունի երեխաների մտավոր կարողությունների զարգացման գործընթացում: Դասն ավելի հաջողված ու արդյունավետ կլինի եթե միջառարկայական կապերի հետ կիրառվի նաև փոխներգործուն մեթոդներ:

Հասկանալի է, որ տարրական դասարանների աշակերտները չեն կարողանալու լիովին պատասխանել հարցաշարերում ներկայացված բոլոր հարցերին: Այստեղ էլ ձևավորվում է համագործակցական աշխատանք աշակերտ-ծնող, աշակերտ-տեղեկատվական համակարգ, աշակերտ-աշակերտ խմբային ձևերը: Դա էլ իր հերթին նպաստում է, որ նրանք աստիճանաբար դառնան ինքնուրույն, որն էլ թույլ կտա հետագայում կյանքի ընթացքում իրենց առջև ծառացած խնդիրները հաղթահարել, կատարելագործվել:

Ուսուցման այս տեխնիկան թույլ է տալիս առարակների միջև առակա կապերի միջոցով հաղորդակցվել գիտության և կյանքի բազմազան երևույթների հետ:

Փոխներգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

- Աշակերտը յուրացնում է տվալ դասանյութը, ինչ-որ բան անելով, մասնակից լինելով ուսումնական գործընթացին:
- Աշակերտների համար ստեղծվում են պայմաններ աշախատելու ոչ միայն անհատական, այլ նաև խմբային եղանակով:

[1] Ջուլիտա Գյուլամիրյան, «Մայրենիի ուսացման մեթոդիկա», Երևան, Զանգակ հրատարակչություն,2015,էջ 28

- Թույլ է տալիս աշակերտներին ինքնուրույն սեղծագործել, զարգացնել քննադատական մտածողությունը։
- Աշակերտը զարգացնում է համագործակցային ու սոցիալական կարողությունները
- Հնարավորություն է տրվում աշակերտին արտահայտվել, կիրառել իր սովորածը
- Սովորեցնում է ինքնակրթվել։

Ուսուցման ընթացքում մեթոդի կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է՝

- Աշակերտների քանակով,
- Դասի նպատակներով,
- Դասի բովանդակությամբ,
- Ուսումնական նյութի քանակով
- Ուումնական ժամաքանակով,
- Սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններով,
- Աշակերտների շահագրգռվածությունով,
- Ուսուցչի պատրաստվածության մակարդակով,
- Աշակերտների հետաքրքրությունների սահմանով։[2]

Ուսուցման գործընթացի ճիշտ ու արդյունավետ կազմակերպման համար ժամանակակից ուսուցչին անհրաժեշտ ոչ միայն դասավանդվող առարկայի խորը իմացություն, այլ նաև դասավանդման խնդիրների, նպատակների, դրանց իրականացման եղանակների, միջոցներ ու ձևերի ճիշտ ընտրություն կարողունակություն ու հմտություն, մանկավարժական տեխնոլոգիա։

Մանկավարժական տեխնոլոգիան գործողությունների հաջորդականություն է, որը թույլ է տալիս ստանալ արդյունքը ամենանվազ ծախսերով, համակարգային

[2] https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_3.html

մտածողության եղանակի ներդրումը մանկավարժության մեջ, որը հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը դարձնել ամբողջովին կառավարելի:[3]

Մեթոդների իմացությունն բավարար չէ արդյունավետ դասավանդման համար, ամենակարևորը՝ դրանք ըստ իրավիճակի ճիշտ կիրառելու մասնագիտական հմտությունն է:

Ավանդական դպրոցում սովորող լոկ գիտելիքների որոշակի պաշար ընկալող ու մտապահող էր, պասիվ լսող, իսկ ներկայումս փոխներգործուն մեթոդները սովորողներին հնարավորություն են տալիս ինքնուրույն դատողություններ անել, կշռադատել, քննադատաբար մոտեցում դրսևորել, նախաձեռնել: Այս ամենը նպաստում են, որ սովորողներն ուսումնական նյութը շատ ավելի արագ ընկալեն:

Այժմ ներկայացնենք ԽԻԿ համակարգով ուսուցման ժամանակ փոխներգործուն մեթոդների մի քանի տարբերակները:

Խթանման փուլում նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները.

1. Մտագրոհ
2. Խմբավորում
3. Պրիզմա
4. ԳՈՒՍ
5. Դերային խաղեր

Իմաստի ընկալման փուլում կիռելի մեթոդներ են.

1. Տ- աձև աղյուսակ
2. Գաղափարների /հասակցությունների քարտեզագրում,
3. Բանավեճ
4. Ձրույց
5. Փոխներգործուն նշանների համակարգ
6. Վիենի դիագրամ

Կշռադատման փուլում կիրառելի մեթոդներ են.

[3] Պետրոսյան Հ., «Մանկավարժական ժամանակից տեխնոլոգիաներ»,Երևան 2012, էջ 540

- Գնահատման անիվ,
- Քառաբաժան
- Իրավիճակների վերլուծության մեթոդ
- Ձնագնդի [4]

Իսկ այժմ ներկայացնենք մի քանի փոխներգործուն/ ինտերակտիվ մեթոդներ.

Վիենի դիագրամ, կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մակերես ունենան կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարների, կերպարների կամ թեմաների ընդհանրությունները ցույց տալու կամ միմյանց հակադրելու նպատակով, օրինակ՝



T-աձև աղյուսակի միջոցով վեր է հանվում միևնույն հասկացության, երևույթի երկու կողմերը համեմատելու համար:Այն կազմված է երկու բաժնից, որտեղ լրացվում է տվյալ երևույթի, հասկացության հակադիր կողմերը, դրական և բացասական կողմերը:

ԾԱՂԻԿՆԵՐ

Դրական կողմեր	**Բացասական կողմերը**
Գեղեցիկ են, ուրախացնում են,	**շուտ են փչանում, ալերգիա են առաջացնում**
Օգտակար են, հարստացնում են օդը թթվածնով	**կան նաև թունավոր բույսեր**

[4] https://multiurok.ru/files/p-okhnergortsown-met-odner.html

Գիշերը արտազատում են

ածխաթթու գազ

Մտագրոհ կամ մտքերի տարափը, փոխներգործուն մեթոդի ամենապարզագույն, բայց միաժամանակնակ շատ արդյունավետ մեթոդ է: Ուսուցման գործընթացում մտագրոհը կիրառվում է մտքերի, գաղափարների, տեսակետների ազատ ու անսահմանափակ արտահայտնման համար: Այն արդյունավետ է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների համար:



Կանխագուշակումների աղյուսակ, այս մեթոդը կիրառվում է իմաստի ընկալման փուլում: Տեքստը բաժանվում է տրամաբանական ավարտ ունեցող հատվածների և ընթերցվում, ոչ թե ամբողջությամբ, այլ հատվածներով: կարդում ենք առաջին հատվածը և կանխագուշակում, թե ինչ կարող է տեղի ունենալ հաջորդ հատվածում՝ հենվելով

տեքսի կոնկրետ փաստի վրա: Եվ այսպես ամեն հատված կարդալուց հետո լրացնում ենք նախապես գծված աղյուսակի համապատասխան վանդակը[5].

Ի՞նչ է պատահելու	Ի՞նչ փաստեր ունեմ	Ի՞նչ եղավ

Հալիձորի միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանի 10-ը աշակերտները մասնակցել են փոքրիկ հարցման, ո՞ր մեթոդն են նրանք ավելի շատ սիրում, և ստացել ենք հետյալ պատկերը.



Դասապլանի առակայությունը բավականին հեշտացնում է դասի ընթացքում ժամանակի նորմալ ու օպտիմալ բաշխումը: Ներկայացնենք դասի նմուշ օրինակ փոխներգործուն մեթոդների կիրառմամբ:

[5] ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԼՈՌՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ, «Ուսուցման ժամանակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, էջ 21

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ

Ամիս, ամսաթիվ-25/10/2023

Ուսուցչուհի- Կարինե Հարությունյան

Առարկա- Մայրենի

Դասարան - Չորրորդ

Դասի թեման - Սողոմոն Մկրտչյան «Թագավորն ու հողագործը», էջ 25

Առաջին դասաժամ - Հաղորդման դաս:

Դասի տևողությունը - 45 րոպե

Նպատակը

ա) Ուսումնական - Աշակերտները կսովորեն վարժ, հասկանալով և առոգանությամբ ընթերցել, ճիշտ և անսխալ գրել, կռահումներ ու դատողություններ անել, վերլուծել ու բնութագրել: Փոքր խմբերում կքննարկեն բնագրի հերոսների կարծիքը միևնույն հասկացության վերաբերյալ, ինչպես նաև լեզվական նյութի շուրջ կկատարեն աշխատանք՝ զարգացնելով համագործակցային կարողություններ:

բ) Դաստիարակչական - Կիմանան ինչպես պահպանեն բնությունը, ծառեր տնկելու և խնամելու, բարիք ստեղծելու, այդ բարիքից օգտվելու մասին, կհասկանան աշխատանքի դերն ու նշանակությունը:

գ) Զարգացնող -Կլինեն հանդուրժող, իմաստուն, օգնող, աշխատասեր, կարգապահ, ճիշտ հաղորդակցվող և համագործակցող:

Արժեքային համակարգը - Կգնահատեն բնությունը, կիմանան մեծի, հողի, ծառի, թփի, կանքի ցանկացած օրվա, ինչպես նաև ճիշտ ու տեղին ասված խոսքի արժեքը:

Վերջնարդյունքներ – Կկարողանան վարժ և առոգանությամբ կարդալ երկխոսությունները, կտարբերակեն հեղինակի և մեջբերվող խոսքերը: Կստեղծեն համագործակցային հարաբերություններ: Կարտահայտեն սեփական մտքերը, զգացմունքները, ցանկությունները: Դերային խաղով կներկայացնեն հերոսների

երկխոսությունը՝ բացատրելով կետադրությունը: Կկրկնեն բառակազմության մասին ունեցած գիտելիքները՝ արմատ, ածանց, պարզ և բարդ բառեր, կբերեն օրինակներ:

Ուսումնական նյութեր – Տարբեր տեսակի ծառերի, թփերի, հատկապես ընկուզենու ճյուղեր, տերևներ, շիվերի, շքախմբի նկարներ, ծառատունկի, թագավորի նկարներ:

Օգտագործվող մեթոդներ - «Կանխագուշակումներ հենակետային բառերով ու արտահայտություններով», «Կրկնակի գրառումներով օրագիր», «Բացատրական ընթերցանություն», «Երեք բանալի, մեկ կողպեք», «Համագործակցային խմբեր»:

Դասի ընթացքը

Առաջին փուլ՝ խթանում: Այս փուլում օգտագործում ենք «Կանխագուշակումներ հենակետային բառերով ու արտահայտություններով» մեթոդը:

Գրատախտակին նախօրոք գրում ենք դասի վերնագիրը և թագավոր, շքախումբ, զառամյալ ծերունի, կնճռապատ ճակատ, քրտինք թափել, ոսկի, ընկուզենի, շիվ, պտուղներ, գանձարան, կալվածք, զինանոց, վեզիր, պարգև բառերն ու արտահայտությունները: Աշակերտներին առաջարկում ենք կանխագուշակումներ անել տեքստի բովանդակության վերաբերյալ, փոքրիկ պատմություն հորինել և գուշակել, թե ինչ կապ կարող է ունենալ տունկը պարգևատրման հետ: Կարող են աշխատել զույգերով կամ համագործակցային փոքր խմբերով:

Աշակերտների գուշակությունները և փոքրիկ պատմությունները լսելուց հետո առաջադրում ենք կարդալ հղումը՝ «Ծառ տնկելը շատ բարի գործ է, քանի որ ծառն կյանքի աղբյուր է: Ինչպես գիտենք, ծառերը միանգամից պտուղ չեն տալիս, բայց այս պատմվածքի նորատունկ ծառը մեկ օրում երկու անգամ առատ բերք պարգևեց: Զարմացա՞ք: Կարդանք…»: Բացատրությունը տալիս ենք բնագիրը կարդալուց հետո, երբ աշակերտներին ծանոթ կլինի այն:

Երկրորդ փուլ՝ իմաստի ընկալում

Այս փուլում ընտրում ենք **«Բացատրական ընթերցանություն»** և **«Կրկնակի գրառումներով օրագիր»** մեթոդները:

Աշակերտներն ընթերցում են դասանյութը՝ զուգահեռ բացատրելով անծանոթ բառերը, արտահայտությունները և կետադրությունը: Երկրորդ անգամ ընթերցելուց հետո ստեղծում ենք նշված օրագիրը, որի համար աշակերտները թուղթն ուղղահայաց գծով բաժանում են երկու մասի: Ձախ կողմում գրում են բնագրի տպավորիչ հատվածները, իսկ աջ կողմում՝ նշված յուրաքանչյուր հատվածի վերաբերյալ մեկնաբանություններ և բացատրում (Ինչի՞ մասին է այդ հատվածը: Ի՞նչ է հիշեցնում այն: Ինչո՞ւ է այդ հատվածը կարևորում):

Բառային աշխատանքի ժամանակ առաջադրում ենք բացատրել հողագործ, շքախումբ, կնճռապատ, մրմնջալ, ժառանգություն, գանձարան, ակնեղեն, զինանոց, ընկուզենի, գեղջուկ բառերի կազմությունը և ուղղագրությունը: Մեկ անգամ ևս աշակերտները հիշում և կրկնում են, որ բառերն ըստ կազմության լինում են պարզ (արմատական), բարդ և ածանցավոր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները:
Ուսուցումը կարելի է կազմակերպել ըստ մակարդակների ուսուցմամբ՝ համագործակցային խմբե րով՝ բաժանվելով երեք խմբի:

Երրորդ առաջադրանքը հանձնարարում ենք առաջին խմբի աշակերտներին: Նրանք պետք է գրեն *ողջունել, պարգևել, չարչարվել բ*առերի հոմանիշները: Աշակերտները, իրար օգնելով, տետրում գրում են *բարևել, բարև տալ, ողջույն տալ, նվիրել, տալ, ընծայել, տրամադրել, տանջվել, քրտինք թափել, տառապել, տքնել, կտտվել* և այլ բառերը: Ովքեր արագ ավարտում են, անցնում են հաջորդ առաջադրանքին:

Չորրորդ առաջադրանքը հանձնարարում ենք երկրորդ խմբի աշակերտներին: Նրանք պետք է գրեն *դժվար, գոհ, ուշ, երկար* բառերի հականիշները: Աշակերտները, խորհրդակցելով՝ գրում են հետևյալ բառերը՝ *հեշտ, դյուրին, դժգոհ,անգոհ շուտ, վաղ, կանուխ, կարճ, սեղմ,հակիրճ* :

Առաջին առաջադրանքը տալիս ենք երրորդ խմբի աշակերտներին: Նրանք մեկնաբանում են **«օրհնել»** բառը ո՞ր իմաստով է գործածվել ստեղծագործության մեջ: Աշակերտները հեշտությամբ գրում են, որ գործածվել է «աղոթքով մեկին բարին ցանկանալ՝մաղթել»

Կշռադատման փուլ: Կիրառում ենք 3 բանալի 1 կողպեք» մեթոդը: Աշակերտներին հանձնարարում ենք բնագրից դուրս գրել 3 նախադասություն, որոնց կողպեքը պետք է լինի «Աշխատանքը առաքինությունների աղբյուր է: Քրտինքը աշխատանքի արցունք» առածը:

Վերջում ամփոփում ենք դասը, հանձնարարում վարժ կարդալ, տնային առաջադրանք՝ էջ 27-ի հարցերի և առաջադրանքների արկղիկի 1-ը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ժամանակակից տեխնոլոգիաներն ու մեթոդները նպաստում են սովորողների հաղորդակցական, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության, հմտությունների, կարողությունների, բարձր աժեքների հաստատմանը, ձևավորում են բարձր որակներ, նարձրացնում ուշադրությունն ու առաջադիմությունը։

2. Փոխներգործուն մեթոդներով պլանավորված դասերին, մասնակցում են դասարանի ողջ աշակերտները։ Այս մեթոդներով դասերը ավելի հետաքրքիր, մատչելի ու գրավիչ են։ Լայնածավալ ուսումնական ն յութերը ավելի հեշտ են յուրացվում, գործնականում կիրառում են ձեռք բերված կարողությունները, գիտելիքներն ու հմտությունները։

3. Մեթոդի ընտրությունը տարրական դասարաններում կախված է նյութի ծավալից, բարդությունից, աշակերտների թվից, կարողութուններից, տվյալ պահի իրավիճակից։ Փոխներգործուն մեթոդները շատ են, ճկուն, որը թույլ է տալիս ուսուցչին հեշտությամբ կողմնորոշվելի մեթոդի ընտրության հարցում։

4. Փոխներգործուն մեթոդներով պլանավորված դասերը ավելի արդյունավետ են, ու հեշտությամբ են յուրացվում։

5. Նպաստում են համագործակցության,, դիմացինին լսելու, հարգելու, կարծիքն ընդունելու, համադրելու, հակադրելու, կշռադատելու գործընթացների ձևավորմանը։

6. Փոխներգործուն մեթոդները զարգացնում են խոսքը, միտք, երևակայությունը, քննադատական մտածողությունը, հիշողությունը։ Ստեղծվում են միջառարակայան կապեր։

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջուլիտա, «Մայրենիի ուսացման մեթոդիկա», Երևան, Զանգակ հրատարակչություն, 2015թ, էջ 28
2. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԼՈՌՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ, «Ուսուցման ժամանակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ,
3. Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան, Մայրենի 4, մաս 1, ԷԴԻԹ ՊՐԻՆՏ հարատարակչություն, Երևան 2021թ
4. Պետրոսյան Հ., «Մանկավարժական ժամանակից տեխնոլոգիաներ», Երևան 2012,
5. https://multiurok.ru/files/p-okhnergortsown-met-odner.html
6. https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_3.html